

Ուստի և նոյնպիսի դէպքի մէջ պէտք չէ ինչ և իցէ զգուշութիւն զանց ընել:

— Ահա նախաճաշի ժամանակը հասաւ, ըսաւ ճոյ. պահծու մսով ու սուրճով զոհանալու ենք, մինչև որ պարոն Գէննըտի միջոց մը գտնէ ու մեզի երէոյ աղէկ մսի կտոր մ'ընծայէ:

Կը շարունակուի:

Օր 'ի Թրումզոյ.

Արևուն շարունակ ներկայութիւնն, և օգուն հաստատուն պարզութիւնն՝ այս գաւառաց ցորեկներուն մասնաւոր գեղեցկութիւն մը կու տան: Երբ կէս զիշերուն մօտ արևն իր ընթացքը դէպ 'ի հիւսիս կը շարունակէ, բոլոր երկիրն՝ հարաւային գաւառաց պէս՝ երեկոյեան հանդարտութիւն մը կը վայելէ: Երբ այս աստղս դարձեալ կը բարձրանայ, կը կարծուի թէ օրն ալ նորէն կը սկսի. և որչափ որ երթալով կը բարձրանայ, նոր ջերմութիւն մը կը տարածէ բոլոր երկիրն վրայ: Պայծառութիւնը ամէն վայրկեան ալ նոյն է, և երբ ջերմաչափը ցածնալով կը ծանուցանէ թէ կէս զիշերը անցած է, մարդ հազիւ կը կարծէ թէ իրիկունը դացած է:

Արևուն տեղին տուած ազդեցութիւնը միշտ պարզ է, վասն զի այն տըխուր տպաւորութիւնն զոր կ'ազդէ մարդուն՝ ալեաց վրայ տարածուելով՝ հոս չի խռովեր զմարդ. կէս զիշերէ քիչ մը ետքը բոլոր բնութիւնը կը սկսի կամաց կամաց կենդանանալ:

Գետնէն ամպեր կը բարձրանան, և այլ և այլ ձևերով օգուն մէջ և լերանց վրայ կը տարածուին. ծովուն մակերեսին վրայ պզտիկ ալիքները կ'իմացընեն որ հիւսիսէն եկող օդն աստիճանաբար աւելի ուժով դէպ 'ի հարաւ կը մղուի: Արեգակն կը բարձրանայ հորիզոնին վրայ, իր ճառագայթները հետզհետէ գետնին վրայ կ'ազդեն: Առուակաց խոխովիւնն՝ որք զեռ երկիրը ծած-

կող ձեանց հալելովը կ'ուռին, զգալի կերպով կ'աճի: Հիւսիսային քամին բոլորովին տիրած է. ալ չի փչեր մըրկի պէս, այլ շարունակ կարգաւորութեամբ մը նեղուցին վրայ: Երեկոյին ժամը ութին՝ ամենայն ինչ դարձեալ խաղաղացած է, ոչ օգուն մէջ ամպ կայ, ոչ հիւսիսային քամի: Գիշերը՝ արեգական քաղցր ջերմութենէ զատ բան չըզգար մարդ:

Բնեւային շրջանակէն անդին եղած ափանց վրայ՝ քիչ տեղ կայ որ թրոմզոյի պէս վայելէ արևուն շարունակ ընթացքը հորիզոնի վրայ՝ առանց ընդմիջելոյ: Գրեթէ ուրիշ ամէն տեղ ժայռ մը կամ բարձրաւանդակ մը քանի մը ժամ անոր տեպըր կը խափանեն: Դարձեալ երբ երևայ՝ այնպէս կու թուի ինչպէս թէ հորիզոնէն նոր դուրս ելած ըլլար: Երբ աներևոյթ կ'ըլլայ, օդոյն բարեխառնութիւնն կը ցածնայ. երբ առաւօտեան հինգին կամ եօթին երևայ՝ ժամէ մը կը բարձրանայ: Այս բանս տեսած էինք 'ի Լէտինկէն. բայց ուրիշ տեղեր երկու անգամ արեւու ելլալը կը տեսնեն, և երկու անգամ նոյն առթիւ օդոյ բարեխառնութիւնը կը զգան: Ի թրոմզոյ կէսօրէն ետքը մինչև երկուքը՝ ջերմութիւնը կ'աճի, և 13 կամ 14 աստիճանի կը հասնի. մինչև ութը կամաց կամաց կը ցածնայ, յետոյ աւելի արագ մինչև 'ի 10 ժամ. անկէ ետեւ դարձեալ քիչ քիչ մինչև կէսգիշեր. այս ատեն 8 կամ 9 աստիճանի կը հասնի: Բայց կէսգիշերուն և ժամ մը միջոց նորէն կը սկսի աճիլ: Արեգակն հոս երկու ամիս հորիզոնին վրայ կը կենայ, կամ մոյխի կիսէն մինչև յուլիսի վերջը:

ԼԵՌՈՒՆՏ ՏԸ ՊԻՒԻ:

Տեսիլ Գերմանիոյ.

Անտառաց բաղմութիւնն և տարածութիւն քաղաքականութեան դեռ նոր սկսիլը կը ցուցնեն. հարաւոյ հին երկիրը՝ զրեթէ անծառ է, և արեգակն